

ձեալ մի և նոյն ձախորդութեան մէջ ինկած այս երկու հոգիքը, որ այնչափ անյարմար եղած էին իրարու, Մայրապետ կայսրուհին ամենեին չբաժնուեցաւ կրօնաւոր կայսեր քովէն, մինչև անոր մահը : Պատմութիւնը չիշատակեր ասկէ աւելի սրտաշարժ գէպ մը, և չպատմեր թէ ի՞նչ խօսեցան իրարու հետ վերջին տեսութեան մէջ: Քանի մը օր տառապելէն վերջը՝ իրունանոս Դիոդինէս մեռաւ, ամենեին գանգատ մը բերնէն չհանելով: Բրոդիի մէջ զինքը թաղեցին, ուր որ Եւդոքսիա մեծ յուղարկաւորութիւն մը ընել առւաւ: Իւր աճիւնը դեռ գտնուելու է Մարմարայի այդ ապառաժներուն վրայ, խառն ուրիշ մոռցուած մարդկանց հետ: Եւդոքսիա նորէն դարձաւ իւր Վոսփորի խցիկն, և ջանաց իւր մատենագրութեանցը զբաղելով՝ քաղցրացընել իրեն դժբաղդութիւնը:

*Շարուհնակելի*

## ԽԱԼԵՍ ԳԽՍԱԽԱՋԵՆ

**Ա**նծելլ ասրի գտնուած եօթն գիսաւորաց մէջ՝ կայ մի գիսաւոր, որ իւր գտնողին և գանուելու եղանակին համար՝ գուցէ միւսներէն աւելի հետաքրքրական ըլլայ: Սա նախ աշքով տեսանելի էր, իսկ գտնողը՝ պարն չումէս՝ պարզապէս աստեղագիտութիւն սիրող և հետամնուած անձ մ'էր ի լոնդրա:

Պր. Հոլմէս, որոյ անուամբ արդէն գիսաւորն այլ կոչուեցաւ, ինչպէս ըսկիք՝ աստեղագիտութեան ախորժող անձ մ'էր, և այս այնչափ՝ զի հազին թէ յարմար ժամանակ գտնէր՝ իսկոյն կը սկսէր երինից հրաշալեաց զննութեամբ զբաղիլ: Եւ այսպէս ահա անցեալ տարւոյ նոյեմբերի սկիզբներն սկըսած էր Անդրոմեդի մեծ միզամածը և նոյն կողմի ուրիշ աստղերը զիտել:

Ամոյն Յ կիրակի օրն երեկոյն՝ ոգն շատ նպաստաւոր չէր երկեր, բայց և այնու հանգերձ իւր վիտակին տեսութիւնն չէր արգիշուր. և երբ խոզարկու փոքրիկ վիտակաւ կը ջանար մեծ հեռաղիտակն իւր ուզած տեղայն յարմարցընել, յանկարծ մեծ եղաւ իւր զարմանքն տեսնելով խուզարկուին մէջ՝ անսովոր առարկայ մը նկարուած, զոր մինչև այն օր չէր տեսած, լաւ տեղեակ ըլլալով հանդերձ երկնից այն մասին: Փութաց ինքն հեռագէտին մէջ նայիլ աւելի լաւ զննելու համար այս յանկարծածանօթ առարկայն. աե-

սածն յայտնապէս նոր զիսաւոր մ'էր, զլուխն կամ միջավայրը բոլորովին պայծառ : Բայց դժբաղվաբար դեռ երկնից մէջ նոր աստեղս զիրքն շրջած՝ ամպերը զայն ծածկեցին : Պր. Հոլմէս իւր սակաւ զիտողութիւններով հազիւ անոր մերձաւոր զիրքը կրցաւ որոշել, որ փոթաց հետևեալ օրը անմիջաւ պէս հաղորդել իւր մի քանի բարեկամաց և գրինվիշի դիտարանի աստեղ զափիտաց : Ուժ նոյեմբերին՝ զիտոր ստուգեցին յիշեալ անձինք, յորոց ումանք կրցեր էին զիսաւորն պարզ աչօք այլ տեսնել : Նոյն օր՝ եղածն հետազրեցին ամէն տեղ, և զանազան դիտարաններէ իսկոյն այլ և այլ զննութիւնն կատարուեցան . բայց օդոյ անյարմարութեան համար զժուարաւ և ասկաւ բան ստացան :

Պր. Հոլմէս մեզի նոյեմբեր 6 և 14 օրերուն զիտորութիւնը միայն կը յայտնէ, անտարակոյս այն ժամանակուան լոնդրայի օդոց խառնակութեան պատճառաւ . իսկ Գրինվիշի դիտարանն այս նոր երկոյթը կրցաւ հետազոտել 9 և 10 նոյեմբերի, և կը վկայէ թէ տեսածն պայծառ և աստեղզական զիսաւոր մ'է : Եղիմբուզի զիտարանէն տեսնուեցաւ 40 նոյեմբերի, որ շատ պայծառ էր՝ բայց փոքր քան զԱնդրուեղի միզամածն :


Պր. Հոլմէս 6 նոյեմբերի համարեցաւ թէ միզակերպ զիսաւորին տրամագիծն հաւասար ըլլայ 5<sup>5</sup> աղեղան . 4 երես զլուխը իւր նախկին յստակութիւն և պայծառութիւնը չունէր . անոր մարմինն կազմող միզամածին սահմանքը իրեն որոշ չէր երկեր, և բոլորակածնութիւնն անկատար, և ներքին լուսափայլութիւնը նուազ :

Զանազան դիտարաններէ զիսաւորի դից նկատմամբ տացուած որոշ զիտորութեանց օգնութեամբ, շատ աստեղահամարք՝ սկսան այս զիսաւորի երկնից մէջ գծած ուղին ծրագրել : Սակայն Հոլմէս զիսաւորը՝ իիս զանդադ կը շարժէր, զիսաւորապէս իւր ընթացքն լինելով տեսութեան ծառագայրին ուղղութեամբ :

Այս պատճառաւ իւր գծած պարունակը սահմաննելն շատ գծուարին եղաւ : Ըստ արտաքին երկութիւն Հոլմէս զիսաւորն շատ կը նմանի Բիելայի զիսաւորին . բայց վրան աւելցնելով միւս նորանոր զիտորութիւնը, յայսնի կը տեսնուի որ արևային դրութեան մէջ նոր մանող այս զիսաւորը՝ պարբերական պիտի ըլլայ, զրբթէ՝ ամէն եօթն տարի գարձեալ այց ելլելով . այժմ ուժ ամնէ աւելի է որ սա իւր մերձակիտէն անցեր է, հեռանալով երկրէս և արևէն, և իւր պայծառութիւնը երագութեամբ սքողելով : Ասոր պարունակն այնքան փոքր կ'երեւի որ հաւանօրէն մեր զօրաւոր զօրժիներով՝ իւր պարունակի որ և է կիսի վրայ այլ որ գտնուի՝ պիտի կարենանք տեսնել զայն : Այս եթէ նոր չըլլար՝ յիրակի զարմանալի է որ այսպիսի պայծառ արփի մը ցարդ գտնուած չէր : թէ և այս զիսաւը մասամբ մը զիտուածական կրնայ համարուիլ, բայց եթէ Պր. Հոլմէս երկնից այն մասին ծանօթութիւն չունենար՝ չէր կարող գտնել : Հու աւելորդ կը համարինց Պր. Հոլմեսի ջանից ներբողեան ընել, որովհետեւ արդէն իսկ իր անունն նոր:

բազիւս վարսամի վրայ դրոշմուած՝ լուսաւոր ճառագայթներով կերպով մը անմահից մէջ հիս կուգայ :

Արպէս զի մեր ընթերցողաց Պր. Հոլմէսի գտած զիսաւորին երևութին կամ ձեռյն նկատմամբ կատարեալ գաղափար մը տանք, ահա կը ներկայացը նենք նոյեմբեր 14ին Պարիսու զիսարանէն հանուած անոր լուսանկարը, Պօղոս և Պրոսպէր Հենրիկեան պարոնայց ձեռքով, որ երկու ժամ տևեց



(8<sup>+</sup> 204.-10<sup>+</sup> 204.): Նմանատիպ կաղապարը 5 անգամ ընդարձակուեցաւ, և գեղեցիկ օրինակ մը՝ զիսարանին ուղղիլ Պր. Տիսէրանդ՝ ներկայացոց զիտութեանց մեմարանին 24 նոյեմբերի նստին ժամանակ։ Միզակերպ զիսաւորիս պարագիծն յատակ գծած է, որ զրեթէ բոլորակ է, և բաւական թափանցիկ է, և միջէն կը տեսնուին բազմաթիւ աստեղք։ Գլուխն փաղիլուն և արտակեղոնն, բայց իւր պայծառութիւնն չի խափաներ ուրիշ նոյն տղղութեամբ ցոլացող աստեղաց տեսութիւնը։ Խսկ գէսին՝ ակար հետք մը միայն կայ :